



*Համարը* ՀՕ-221-Ն

*Տեսակը* Պաշտոնական  
Ինկորպորացիա

*Տիպը* Օրենք  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2011.07.20/44(847)  
Հոդ. 1041

*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունող մարմինը* ՀՀ Ազգային ժողով  
*Ստորագրող մարմինը* ՀՀ Նախագահ  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 30.07.2011

*Ընդունման ամսաթիվը* 23.06.2011  
*Ստորագրման ամսաթիվը* 12.07.2011  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

- [+ Կապեր այլ փաստաթղթերի հետ](#)
- [+ Փոփոխողներ և ինկորպորացիաներ](#)

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2011 թվականի հունիսի 23-ին

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ  
(*վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն*)

### Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ավտոկայանատեղերի համար տեղական վճարի (այսուհետ՝ վճար) վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանվում են վճար վճարողները, վճար վճարողների իրավունքներն ու պարտականությունները, վճարի դրույքաչափերը, վճարի սահմանման, գանձման կարգը և պայմանները, վճար չվճարելու համար պատասխանատվությունը:

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են միայն համայնքի ավագանու կողմից սահմանված՝ համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում (այսուհետ՝ ավտոկայանատեղ) ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը (այսուհետ՝ ավտոտրանսպորտային միջոց) կայանելու դեպքում ծագած հարաբերությունների վրա:

(*1-ին հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն*)

### Հոդված 2. Ավտոկայանատեղի համար գանձվող վճարի հասկացությունը

(*վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն*)

1. Ավտոկայանատեղի համար գանձվող վճարը ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու համար սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից հաստատված չափով և սույն օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

(*2-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն*)

**Հոդված 3. Ավտոկայանատեղի գործունեություն կազմակերպող մարմինը**

1. Ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպում է համայնքի ղեկավարը կամ համայնքային ենթակայության կազմակերպությունը:

2. Համայնքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք իրականացնում են վճարի գանձումը՝ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրին համապատասխան:

*(3-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 4. Ավտոկայանատեղի վճար վճարողները**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ավտոկայանատեղի համար վճար վճարողներ են հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած ֆիզիկական և իրավաբանական անձինք:

2. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի վճարը չվճարվելու դեպքում ավտոկայանատեղի վճար վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն է՝ ապա այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը:

*(4-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 5. Ավտոկայանատեղի վճար վճարողների իրավունքները**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ավտոկայանատեղի վճար վճարողներն իրավունք ունեն՝

- 1) ծանոթանալու ավտոկայանատեղի վճարի չափին և գանձման կարգին.
- 2) պահանջելու ավտոկայանատեղի վճար գանձող մարմնից կատարելու վճարի վերահաշվարկ.
- 3) բողոքարկելու ավտոկայանատեղի վճար գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները.
- 4) ստանալու ավտոկայանատեղի վճար վճարելու մասին տեղեկանք.
- 5) օրենքով սահմանված դեպքերում հետ պահանջելու և ստանալու վերադարձման ենթակա ավտոկայանատեղի վճարի գումարը.

6) բողոքարկելու համայնքի ավագանու՝ ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերի վերաբերյալ որոշումները:

*(5-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 6. Ավտոկայանատեղի վճար վճարողների պարտականությունները**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ավտոկայանատեղի վճար վճարողները պարտավոր են՝

- 1) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար վճարել ավտոկայանատեղի վճար.
- 2) ավտոկայանատեղի վճարի գանձում իրականացնող մարմիններին կամ լիազոր անձանց ներկայացնել ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար վճարի վճարումը հիմնավորող փաստաթղթեր կամ դրանց պատճենները:

*(6-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 7. Ավտոկայանատեղի վճարի գանձման օբյեկտները**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ավտոկայանատեղի վճարը գանձվում է բոլոր տեսակի ավտոտրանսպորտային միջոցները կամ դրանց կցորդներն ավտոկայանատեղում կայանելու համար:

*(7-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 8. Ավտոկայանատեղի կազմակերպումը և ներկայացվող պահանջները**

1. Ավտոկայանատեղը կազմակերպվում է տվյալ համայնքի ավագանու որոշմամբ, որը համաձայնեցվում է լիազոր

մարմնի հետ: Եթե ավտոկայանատեղը պետք է կազմակերպվի գորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում, ապա ավտոկայանատեղը կարող է կազմակերպվել միայն համապատասխան մարմինների համաձայնությամբ:

2. Այն ավտոկայանատեղը, որի համար նախատեսվում է վճարի գանձում, պետք է առանձնացված լինի ցուցանակներով և կարմիր գույնի գետնանշումով, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղի կազմակերպման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**(8-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)**

**Հոդված 9. Ավտոկայանատեղի վճարի դրույքաչափի սահմանումը և վճարման ձևերը**

**(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)**

1. Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

2. Ընթացիկ տարվա համար ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

3. Նույն ավտոկայանատեղում միատեսակ ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար պետք է սահմանվի վճարի միասնական դրույքաչափ:

4. Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը կարող են սահմանվել ըստ կայանատեղի, ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, ըստ օրերի և օրվա ժամերի, ըստ ամսվա և տարվա: Ընդ որում՝ ավագանին կարող է սահմանել կանխավճարային կտրոնային համակարգ:

5. Ավտոկայանատեղի վճարի վճարման ձևերը սահմանում է համայնքի ավագանին:

6. Ավտոկայանատեղի վճար գանձող մարմինը պարտավոր է վճար վճարողին տրամադրել վճարումը հավաստող անդորրագիր, ինչպես նաև՝ պահանջելու դեպքում վճար վճարողին տրամադրել վճարման վերաբերյալ տեղեկատվություն:

**(9-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)**

**Հոդված 10. Ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերը**

**(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)**

1. Ավտոկայանատեղի վճարը գանձվում է Հայաստանի Հանրապետության դրամական արժույթով՝ դրամով:

2. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է վճար հետևյալ դրույքաչափերով՝

- 1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մինչև 300 դրամ ներառյալ.
- 2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մինչև 2500 դրամ ներառյալ.
- 3) մեկ շաբաթվա համար՝ մինչև 5000 դրամ ներառյալ.
- 4) մեկ ամսվա համար՝ մինչև 25000 դրամ ներառյալ.
- 5) մեկ տարվա համար՝ մինչև 100000 դրամ ներառյալ:

Ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված վճարի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար թույլների հաշվարկման մեթոդ:

**(10-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)**

**Հոդված 11. Ավտոկայանատեղի վճարի վճարման պարտականության և դրա չափի վերաբերյալ իրազեկումը**

**(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)**

1. Ավտոկայանատեղում պետք է փակցված լինի համապատասխան ցուցանակ՝ վճարովի ավտոկայանատեղի, դրա տարածքի, ավտոկայանատեղի համար վճարի վճարման պարտականության չափի, պայմանների և պատասխանատվության մասին հայերեն պարզ և ընթեռնելի նշումներով, ինչպես նաև՝ ավտոկայանատեղ կազմակերպող մարմնի հայեցողությամբ՝ այլ տեղեկատվությամբ: Ընդ որում՝ ցուցանակը կարող է ներառել նաև օտար լեզուներով տեղեկատվություն:

**(11-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)**

**Հոդված 12. Ավտոկայանատեղի վճարի վճարման պարտավորության ծագումը**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ավտոկայանատեղի վճարի վճարման պարտավորությունը ծագում է ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու պահից:  
*(12-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 13. Ավտոկայանատեղի վճարի վճարումը գործակալի կողմից**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ավագանու որոշմամբ իրենց կողմից նշված տարածքում ավտոկայանատեղ նախատեսելու համար և վճարել ամսական կամ տարեկան վճար ամբողջ ավտոկայանատեղի տարածքի համար: Վճարի չափը հաշվարկվում է ըստ տվյալ ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցների կայանման տեղերի թվի և ավագանու կողմից սահմանված մեկ ավտոտրանսպորտային միջոցի դրույքաչափի:

2. Ավտոկայանատեղի ամբողջ տարածքի համար վճար վճարած ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունեն ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:  
*(13-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 14. Արտոնությունները**

1. Իրենց պարտականություններն իրականացնելու ժամանակ ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնությունից օգտվում են ոստիկանության, արտակարգ իրավիճակների և շտապ օգնության ավտոտրանսպորտային միջոցները՝ առկայծող փարոսիկները կամ հատուկ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումները միացրած լինելու դեպքում:  
*(14-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 15. Ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը, հսկողության իրականացման կարգը և ձևերը**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է տվյալ համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:
2. Ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ հսկողությունը կարող է իրականացվել անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի միջոցով (նկարահանող, ձայնաազդանշանային համակարգեր և այլն):
3. Ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը որոշում է տվյալ համայնքի ավագանին:  
*(15-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 16. Պատասխանատվությունը ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

1. Ավտոկայանատեղի վճար չվճարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:  
*(16-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 17. Ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելը**

1. Եթե ավտոտրանսպորտային միջոցն առանց համապատասխան վճարի վճարման ավտոկայանատեղում կայանել է քառասունույթ ժամից ավելի, ապա ավտոկայանատեղի կազմակերպիչն իրավունք ունի տվյալ ավտոտրանսպորտային միջոցն իր ուժերով տեղափոխելու դրա համար նախատեսված հատուկ տարածք (այսուհետ՝ հատուկ տարածք), եթե ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը կամ նրա լիազորած անձը կամ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը, չի ստանձնում պարտավորություն վճարելու տեղական վճարն ու վճարը չվճարելու համար օրենքով նախատեսված տուգանքը: Ընդ որում՝ կազմակերպիչն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում ավտոտրանսպորտային միջոցն անվնաս տեղափոխելու համար:
2. Ավտոտրանսպորտային միջոցի տեղափոխումը հատուկ տարածք իրականացվում է մեկ այլ տրանսպորտային

միջոցի օգնությամբ, և այդ մասին անմիջապես պատշաճ ձևով տեղեկացվում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը:

3. Կազմակերպիչը կազմում է ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրություն, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Արձանագրության կրկնօրինակն ուղարկվում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը:

4. Ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածքում պահպանելու ժամկետը հաշվվում է օրերով և ժամերով՝ սկսած հատուկ տարածքում այն տեղափոխելու պահից:

5. Հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի պահպանման համար գանձվում է վճար՝

1) յուրաքանչյուր ժամի համար՝ մինչև տվյալ ավտոկայանատեղի համար սահմանված դրույքաչափի եռապատիկը ներառյալ:

2) յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև տվյալ ավտոկայանատեղի համար սահմանված դրույքաչափի եռապատիկը ներառյալ:

6. Հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցը դրա սեփականատիրոջը, նրա լիազորած անձին կամ այն անձին, ում կցված է այն, հանձնվում է հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծախսերն ամբողջությամբ փոխհատուցելուց հետո:

7. Հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցները հաշվառվում են: Հաշվառման կարգը սահմանում է համայնքի ավագանին:

*(17-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 18. Ավտոկայանատեղի վճարի ավել մուծված գումարները վերադարձնելը**

*(վերնագիրը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

Ավտոկայանատեղի վճարի ավել մուծված գումարները ենթակա են վերադարձման ավտոկայանատեղի վճար վճարողի դիմումի հիման վրա՝ դիմումը հանձնելուն հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում:

*(18-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հոդված 19. Եզրափակիչ դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

3. 2011 թվականի համար ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերը համայնքի ավագանու կողմից կարող են սահմանվել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

*(19-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-236-Ն)*

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ**

**Ս. Սարգսյան**

2011 թ. հուլիսի 12  
Երևան  
ՀՕ-221-Ն